ՀԻՆ ՔԱՂԱՔԸ ԲԵՄԱԴՐՈՂ ՆԿԱՐԻՉԸ...

«ՀԻՆ ԹԻՖԼԻՍԸ ԷԼԻԲԵԿՅԱՆԻ ՀԱՄԱՐ ԼԵՈՆԱՐԴՈՅԻ ՋՈԿՈՆԴԱՆ ԷՐ...». ՆՐԱ ՏԱՂԱՆԴԸ ՔՈՒՆ ԷՐ ՄՏԵԼ, ՈՐ ԱՎԵԼԻ ՈՒԺ ԱՐԹՆԱՆԱՐ



Սովորաբար, գերդաստանների պատմությունն սկսվում է ծնողներից: Էլիբեկյանների պարագայում ամեն ինչ եղել է ճիշտ հակառակը՝ նախ նկարիչ են դարձել Վաղարշակ Էլիբեկյանի որդիները՝ Ռոբերտն ու Հենրին, ապա՝ նաեւ նրանց հայրը: Ի դեպ, կրտսերը Ռոբերտն է: Նա՝ որպես նկարիչ, նախորդել է ոչ միայն հորը, այլեւ ավագ եղբորը: Իսկ տաղանդավոր զավակների հայրը նրանց էր միանալու կենսաթոշակի անցնելուց հետո միայն: Զարմանալի է, չէ՞...

Բայց ամենազարմանալին հենց իր՝ ժողովրդական նկարիչ, արդեն 64-ամյա Վաղարշակ Էլիբեկյանի առաջին անգամ ձեռքը վրձին առնելն ու իր մեջ քնած տաղանդն արթնացնելն է: Իսկ մինչ այդ...

Վրաստանի մայրաքաղաքում ծնված ապագա արվեստագետը, որ իր ձեռագիրն էր թողնելու հայ գեղանկարչության պատմության մեջ, 20-րդ դարի 30-ական թվականներին ավարտել է Թիֆլիսի «Հայարտուն» մշակութային կենտրոնի նկարչական ստուդիան: Թվում է, թե հենց երիտասարդական տարիքից պիտի սկսեր զբաղվել նախընտրած արվեստով: Սակայն ճակատագիրն այլ ճանապարհ էր նախանշել. 26 տարեկանում նշանակվում է Թիֆլիսի պատանի հանդիսատեսի թատրոնի տնօրեն: Նրան թվում էր, որ այդ աշխատանքին զուգահեռ կզբաղվի նաեւ նկարչությամբ, բայց տնօրենի ծանրաբեռնված աշխատանքը դրա հնարավորությունը չի տալիս: Որոշ ժամանակ անց, տեղափոխվում եւ նույն պաշտոնն է ստանձնում Ստեփան Շահումյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնում՝ միաժամանակ լինելով թատրոնի գեղարվեստական խորհրդի նախագահը եւ բեմադրող-նկարիչը: Այդ տարիներին Վաղարշակ Էլիբեկյանը ձեւավորում է երկու տասնյակից ավելի ներկայացումներ: Յուրաքանչյուր ներկայացման պրեմիերայից հետո, քննադատները պնդում են, որ իր կոչումը նկարչությունն է. ներկայացումների բարձրակարգ ձեւավորումները դա էին հաստատում: Բայց հորդորներն անարդյունք էին մնալու այնքան ժամանակ, քանի դեռ չէր անցել կենսաթոշակի, եւ չէր արթնացել քնած մուսան: Իսկ դրան մղողը ոչ այլ ոք, քան... պարապությունն էր լինելու. ի՞նչ անել այդ ծանձրույթը թոթափելու համար:

Եվ ձեռք է բերում նկարչական պարագաներ: Տղաներն արդեն Երեւանում էին եւ գտել էին իրենց կոչումը՝ նկարիչներ էին, մինչդեռ հայրը նոր էր սկսում: Ստեղծագործական թեման Թիֆլիսն էր: Եվ ծնվում են առաջին կտավները՝ «Թատերական Թբիլիսի», «Հավլաբարի հրապարակը», այլ գործեր: Թատրոններում մի ամբողջ կյանք անցկացրած գեղանկարիչը կտավներն օգտագործելու էր մասնակցությամբ: Վրձնելու եւ գալիք սերունդներին էր հանձնելու նաեւ Անդրկովկասի մշակութային կենտրոն համարվող հին Թիֆլիսի ճարտարապետական նկարագիրը՝ նեղ ու ծուռ փողոցների, կղմինդրե շենքերի զարդանախշ պատերի, ճաղաշար պատշգամբների, զիգզագաձեւ քիվերի ու աստիճանավանդակների պատկերներով:

«Հին Թիֆլիսին նվիրված նկարների շարքը ես ստեղծել եմ մեծ բավականությամբ ու սիրով, որոնք արտահայտում են հիացմունք եւ անսպառ սեր դեպի Թբիլիսին՝ իմ մանկության քաղաքը»,- գրելու էր իր Թիֆլիսն ստեղծած վաստակաշատ գեղանկարիչը, որ արարել է այդ քաղաքի մասին իր հիշողությունների բարի, աշխույժ մի ամբողջ աշխարհ:

Զարմանալի շռայլությամբ է ստեղծագործել Վաղարշակ Էլիբեկյանը՝ չորս տարում 150-ի հասնող

Վաղարշակ Էլիբեկյանը՝ կնոջ՝ Ֆլորայի, զավակների՝ Լուիզայի, Հենրիի ու Ռոբերտի հետ:
Լուսանկարը՝ ընտանեկան ալբոմից «Վրաստան» թերթին տրամադրեց Լուիզայի դուստր Արփինե Մուրադյանը

կտավ: Եվ չնայած այն իրողությանը, որ քաղաքը վրացական է, բայց կտավներում միջավայրն ու կերպավորումներն այնքան են հայաշունչ ու հոգեհարազատ, որ ակամայից մտածում ես, թե վրաց ողջ մայրաքաղաքն է հայկական կերպարի մեջ:

Մեկ այլ ականավոր թիֆլիսահայ՝ Աղասի Այվազյանը, որ հիացած էր իր համաքաղաքացու արվեստով, չի թաքցրել իր սքանչացումը. «Հին Թիֆլիսը Էլիբեկյանի համար Լեոնարդոյի Ջոկոնդան էր, Վան Գոգի արեւն ու Այվազովսկու ծովը...»: Ռուբեն Զարյան արվեստաբանն էլ իր խոսքն էր ասելու. «Էլիբեկյանի նկարները հիշողություններ են: Դրանցում հաստատվում են քաղաքի կենսասիրությունն ու կենսուրախությունը, միայն իրեն բնորոշ տոնականությունը»:

Հայ կերպարվեստում իր անունը հաստատած նկարիչը անհատական ցուցահանդեսներ է ունեցել Երեւանում, Թբիլիսիում, Լոնդոնում, Լոս Անջելեսում, այլ քաղաքներում, վաստակել Վրաստանի, Հայաստանի ժողովրդական նկարչի կոչումներ: Նրա ստեղծագործություններն իրենց պատվավոր տեղն են գտել Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում, Հայաստանի, Վրաստանի Ազգային պատկերասրահներում, Մոսկվայի, Բաքվի պատկերասրահներում, արտերկրի բազմաթիվ մասնավոր հավաքածուներում:

...Էլիբեկյաններ՝ զարմանալի գերդաստան. նկարչի տաղանդավոր զավակները՝ Հենրին եւ Ռոբերտը, նաեւ նրանց շառավիղները գալու էին նոր երանգներով հարստացնելու մեր գեղանկարչական արվեստը, նոր հնչեղություն տալու հայրական իրենց ազգանվանը...



Վաղարշակ Էլիբեկյան. «Թբիլիսին՝ իմ մանկության եւ պատանեկության քաղաքը»

ՀԱԿՈԲ ՍՐԱՊՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆ

ՎՐԱՍՏԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ Է ԷԴՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆԻՆ

Մայիսի 12-ին Հայաստանի գրողների միության նախագահ, բանաստեղծ, նկարիչ, Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ Էդվարդ Միլիտոնյանը նշեց իր ծննդյան 70-ամյա հոբելյանը: Բանաստեղծի ծննդյան հոբելյանական տարեդարձի կապակցությամբ շնորհավորական ուղերձներ են հղել Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը, Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը:

Իր հայ գործընկերոջը շնորհավորել է նաեւ Վրաստանի գրողների միության նախագահ Մաղվալա Գոնաշվիլին, ում «Նվեր Մայրիկին» Երեւանում լույս տեսած գիրքը, խմբագրվել է Էդվարդ Միլիտոնյանի կողմից:

Ընթերցողին երկայացնում ենք Մաղվալա Գոնաշվիլու շնորհավորական ուղերձը:

Ազգերի միջեւ բարիդրացիական, պատվախնդիր ու խաղաղ համակեցության ավանդույթները ձեւավորվում եւ ամրանում են դարերի ընթացքում: Դարերի ընթացքում կառուցվում է բարեկամություն կոչվող կամուրջը ու, եթե ժամանակակից գործիչների կողմից չի ամրապնդվում նրա հիմքը, ճեղքեր են գոյանում:

Վրացիների եւ հայերի բարեկամությունը դարեր է հաշվում: Եվ այդ կապող սիրո ամրապնդման առանցքային գործիչներից մեկը Էդվարդ Միլիտոնյանն է՝ Հայաստանի գրողների միության նախագահը, փայլուն բանաստեղծն ու իր ողջ էությամբ մտավորականը, բազմաթիվ մրցանակների եւ պարգեւների կրողը:

Վրաց ընթերցողը լավ է ճանաչում Էդվարդ Միլիտոնյանին եւ սիրում է նրա իմաստնությամբ ու տաղանդով լի ստեղծագործությունը: Հայտնի է, որ ազգի ոգին բանաստեղծության մեջ է ապրում: Ահավասիկ, հայի ոգին ապրում է Էդվարդ Միլիտոնյանի հիասքանչ պոեզիայում: Նրա յուրաքանչյուր տողն անցյալի հանդեպ խորն ակնածանք է, բերկրանք ու զղջում արդիականության հանդեպ: Միլիտոնյանի բանաստեղծություններից մեկում, որը կոչվում է «Պոեզիա», մեծն ստեղծագործողը սրտի ցավով նշում է. «Պատի մոտ նստած է պոեզիան՝ թափառական շան կարգավիճակով»: Այսօր՝ ատոմի, նեյլոնի եւ համակարգչի դարում, երբ անտարբերությունը ստվերել է կարեկցությանը, երբ փողն է դարձել մարդկանց շարժիչ ուժը, երբ փորձում են ցած գցել պոեզիայի մեծության լուսապսակը, կրկին բանաստեղծն է փորձում ճանապարհից շեղված մարդկանց հոգիներում լույսի, բարության շիվ բերել ու հոգին այդ լույսով ջերմացնել: Այդպես են գրվում Էդվարդ Միլիտոնյանի բանաստեղծությունները, այդպես են ստեղծվում նրա հիասքանչ գեղարվեստական կտավները: Վրաստանի մայրաքաղաքը գովերգել են բազմաթիվ օտար բանաստեղծներ, քանիսն են բանաստեղծություն նվիրվել Թբիլիսիին, եւ սակայն հազվադեպ եմ կարդացել նման ջերմ տողեր, որպիսիք գրվում են պարոն Էդվարդի բանաստեղծություններում, հազվադեպ եմ տեսել նույնքան գույն, արեւի շող ու փառաբանում: Այո՛, այդպես միայն ամենահավատարիմ ընկերներն են գրում...

Գիտեմ՝ Հայաստանն արժանվույն նշեց իր ընտրյալ զավակի հոբելյանական օրը, այդուհանդերձ, մենք՝ նրա ընկերները, մեծ սիրով սպասում ենք նրան Թբիլիսիում, որպեսզի միասին եւս հոբելյանական միջոցառում կազմակերպենք մեր սերն ու հարգանքը, հավատարմությունը եւս մեկ անգամ հաստատելու համար:

Ուզում եմ շնորհավորել իմ սիրելի ընկերոջն ու գործընկերոջը հոբելյանական տարեթվի առիթով եւ մաղթել նրան երկարակեցություն, արեւշատություն. ստեղծագործական հաջողություններ եւ ընթերցողների մեծ սեր:

ՄԱՂՎԱԼԱ ԳՈՆԱՇՎԻԼԻ
Վրաստանի գրողների միության նախագահ

«Վրաստան» թերթի աշխատակազմը, բազմահազար ընթերցողները, Էդվարդ Միլիտոնյանի ստեղծագործության բազմաթիվ երկրպագուները սիրով միանում են սիրելի բանաստեղծին ուղղված շնորհավորանքներին, մաղթում քաջառողջություն, հոգեզավակ գրքերի նորանոր ծնունդներ եւ, իհարկե, կրկնապատիկ ջանք ու եռանդ հայ-վրացական գրական կապերն է՛լ ավելի խորացնելու ու ամրապնդելու գործում:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Հարգելի՛ ընթերցողներ: Շուրջ երկու տարի, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ «Վրաստան» թերթը դադարեցրել էր իր ավանդական եւ ընթերցողների շրջանում հետաքրքրություն վայելող 6-րդ էջի «Այլազան» խորագրով նյութաշարերի տպագրումը: Ժամանակի պահանջով տվյալ էջը տրամադրվում էր «Կովիդ-19»-ի սրմամբ պայմանավորված իրավիճակի լուսաբանմանը, մեր երկրի կառավարության որոշումներին՝ սահմանափակումներին, վարակի տարածումը կանխարգելող միջոցառումներին, մասնագետների եւ փորձագետների հնարավոր խորհրդատվություններին: Այսօր, երբ վստահությամբ կարող ենք ասել, որ ինչպես աշխարհում, այնպես էլ՝ մեր երկրում, կորոնավիրուսը գրեթե հաղթահարվել է, եւ համավարակային իրավիճակի սրությունը զգալիորեն հանդարտվել, խմբագրությունը, ընդառաջելով «Այլազանի» նյութաշարը մեր թերթում կրկին տեսնելու ընթերցողների բազմաթիվ խնդրանքներին, վերսկսում է սիրված հրապարակումները:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂՐԸ՝ ՀՐԱՇԱԳՈ՞ՐԾ

Բժշկական շատ յեռնարկներում նյութեր են հրապարակված մեղրի հրաշագործ հատկությունների մասին: Հետաքրքիր է՝ ինչի՞ վրա են հիմնված կամ գործնականում փաստավորկված նման պնդումները:

Ս.Կարապետյան
Ծալկայի մունիցիպալիտետ

Սովորաբար, մեղրը ասոցացվում է մեղվի հետ: Հետազոտությունները պարզել են, որ մեղուն մոտավորապես 56 միլիոն տարեկան է: Սակայն, միլիոնավոր տարիներ առաջ գոյություն ունեցած մեղուն ոչնչով չի տարբերվում այսօրվա մեղվից: Նշանակում է՝ այս զարմանալի միջատը, բանական մարդուց այդքան առաջ ստեղծված լինելով, մինչ օրս էվոլյուցիոն ոչ մի փոփոխության չի ենթարկվել: Այսինքն, ստեղծված համակարգն այնքան կատարյալ է, որ սրբագրումների կարիք չի զգացվել: Հետեւաբար, այդպիսի կատարյալ համակարգը չի կարող անկատար արտադրանք տալ: Բայց հնում մեղր հասկացողությունն ընդգրկում էր փեթակում արտադրվող մթերքն իր բոլոր բաղադրիչներով, որոնց հանրագումարը շատ ավելին էր, քան պարզապես մեղրը: Ահա թե ինչու է մեր օգտագործած մեղրը տարբերվում մեր նախնիների օգտագործած առասպելական ու հրաշագործ մեղրից: Այնուամենայնիվ, մեղրն այն մթերքն է, որն օժտված է բացառիկ օգտակարությամբ: Հետեւաբար, պետք է տանը միշտ լավ մեղր ունենալ: Դա անհրաժեշտ է ընտանիքի բոլոր անդամներին:

ԱՀԱԶԱՆԳ

ԳԱՐԵՋՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

Ամռան շոգ օրերին շատերը՝ որպես փրկարար միջոց, օգտագործում են գարեջուրը: Լսել եմ, որ այդ խմիչքին, դրական հատկություններից բացի, վերագրում են նաեւ բացասական հատկանիշներ: Գուցե պարզաբանեք՝ որո՞նք են դրանք:

Վ.Մալխասյան
ք.Նինոծմինդա

Գարեջուրը չարաշահողների գոտկային հատվածը լայնանում է, մեծանում՝ ստամոքսը: Գարեջրամոլությունը վնասում է ուղեղի այն հատվածները, որոնք պատասխանատու են հիշողության համար: Տղամարդկանց մոտ խախտվում է սերմնաբջիջների զարգացման ընթացքը, բացասական ներգործություն ունի սեռական կյանքի վրա: Էթիլային սպիրտի պարունակությամբ 1 շիշ գարեջուրը համարժեք է 50գ օղու, բայց 1 լ գարեջրի կալորիականությունը 500 կկալ է, այն նաեւ ախորժակն է գրգռում: Գարեջրային ալկոհոլությունը հանգեցնում է նրան, որ լյարդում մի նյութ է արտադրվում, որը խոչընդոտում է հիմնական սեռական հորմոնի արտադրմանը: Դրա արդյունքում, արտադրվում են իգական հորմոններ: Ընդհանրապես, տղամարդկանց եւ կանանց օրգանիզմներում միշտ կան երկու տեսակի հորմոններ, որոնցից մեկի գերակշռությամբ են պայմանավորված արտաքին նշանները: Կանանց մոտ, գարեջրի յուրաքանչյուր շիշը խմելուն զուգընթաց, մեծանում է կրծքագեղձի քաղցկեղի վտանգը: Գարեջուրը բացասական ազդեցություն է ունենում սրտի վրա, այն ծանրաբեռնվում է, հյուծվում, թոշնում եւ չի կարողանում արյունը թափով մղել: Գարեջրի վտանգը հենց դրա երեւութական անվտանգությունն է:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

ԵՐԿԱՐԱԿԵՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԶ ԲԱՂԱԴՐԱՏՈՄՍ

Ամեն առավոտ, քնից արթնանալուց անմիջապես հետո (քաղցած ստամոքսին), 1թ.գ. մեղրով 1 բաժակ տաք ջուր խմել: Կես ժամ չուտել, կարելի է եւ ավելի երկար: Այնուհետեւ, նախաճաշին ուտել վարսակածավարով եւ ջրով պատրաստված խյուս, առանց աղի, շաքարի եւ կարագի: Խյուսին ավելացնել 1 թ.գ. մեղր, 3-4 ճ.գ. անյուղ կաթնաշոռ: Եվ այդպես՝ ամեն առավոտ:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ՍՏԻ ՄԱՍԻՆ

«Իրականում սուտը կեղծ փոխանցման ճշմարտությունն է: Ավելի ուշ ցանկացած մարդ հասկանում է, որ ստի եւ ոչ ստի միջեւ ընտրությունն իրականում մեծ չէ: Եվ սակայն, արդեն շատ ուշ է լինում»:

Ռեյ Բրեդբերի

Մարդու համար մարդկային ոչինչ խորթ չէ, այդ թվում՝ նաեւ ստելը: Այո՛, մարդիկ ստում են, խաբում իրար, երբեմն շահի, երբեմն ջրից չոր դուրս գալու, իսկ երբեմն հենց այնպես: Տեսակավորել ու խոսել ստի մասին կարելի է ու հնարավոր, առաջարկում ենք մի քանի հետաքրքիր փաստ կյանքի անբաժան ու անվերջ այդ երեւույթի մասին...

ԵՐԲ ԽՈՍՈՒՄ ԵՆ ԱՉՔԵՐԸ....

Մի թյուր կարծիք է հաստատված աշխարհում, որի համաձայն, երբ մարդ ստում կամ թաքցնում է մի բան, ապա չի նայում զրուցակցի աչքերին՝ այս ու այն կողմ տանելով աչքերը:

«Սուտն ունի իր անդավաճան ու մշտական ուղեկիցը՝ խորամանկությունը»- Ջոն Լոկ

Ինչպես հաստատում են հոգեբանները, սա միֆ է: Մասնագետներն ուսումնասիրել են փորձարկության հատուկ տեսանյութեր, որոնց ընթացքում, մասնակիցներից ոմանք ճշմարտությունն են ասել, մյուսները ստել են, ըստ որում՝ ե'ւ առաջինները, ե'ւ երկրորդները հայացքն այս ու այն կողմ են տարուբերել, ինչը եւ ստեղծել է այսպես կոչված «վազվզող աչքերի» էֆեկտը: Սուտասանները դա արել են ոչ ավելի հաճախ, քան ճշտախոսները, այնպես որ, աչքերից անհնար է որոշել՝ ստում է մարդը, թե ոչ:

ԵՐԲ ՍՏԻ ԴԵՏԵԿՏՈՐԸ ՍՏՈՒՄ Է...

Որոշ դատարաններում ստի դետեկտորն ընդունում են որպես ապացույց, մինչդեռ լիովին հիմնվել նման «ապացույցի» ճշգրտության վրա, իհարկե, չի կարելի: Իրականում ստի բոլոր դետեկտորները հիմնված են մարդու մոտ սթրեսի եւ տագնապի բացահայտման վրա, այդուհանդերձ, շատ սուտասանների մոտ դրանք հնարավոր է, որ չլինեն, իսկ սա արդեն խոսում է այն մասին, որ նման տվյալները չի կարելի օբյեկտիվ համարել: Բացի այդ, ե'ւ սթրեսը, ե'ւ տագնապը ցանկության դեպքում այդքան էլ դժվար չէ թաքցնել...

Որոշ ուսումնասիրողներ փորձում են ստեղծել սարք, որը կբացահայտի սուտը ուղեղի մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի միջոցով (ՄՌՏ), բայց այս մեթոդի արդյունավետության մասին ապացույցներ դեռ չկան:

ՍՏԵԼՈՎ ԻՆՔՆԵՐՍ ՄԵՋ

Ու թեեւ ստախոսների ու խաբեբաների պատճառով միշտ տուժում է շրջապատը, պարզից էլ պարզ է, որ նման մարդիկ նախ իրենք իրենց են խաբում:

Ուսումնասիրությունները, որոնք անցկացվել են 2011 թվականին, ցույց են տալիս, օրինակ, որ եթե մարդիկ խաբեությամբ ստանում են թեստային հարցերի գնահատականներն ու այդ կերպ արհեստականորեն բարձրացնում արդյունքները, ապա նմանները հակված են գերագնահատել իրենց ընդունակությունները, նույնիսկ, եթե գիտակցում են, որ պատասխանները ստացել են անարդար ճանապարհով: Այլ կերպ ասած, մարդն ինչպես ուրիշին, այնպես էլ ինքն իրեն է խաբում:

ՇՏԱՊՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՈՒՏԸ

Հոգեբանների ուսումնասիրությունների համաձայն, ավելի հաճախ սուտը չի ծրագրվում նախապես: Մարդկանց մեծամասնությունը խաբում է այն ժամանակ, երբ անհրաժեշտ է ընդունել արագ որոշում եւ ստի հետեւանքների մասին մտածելու ժամանակ այդ պահին չի ունենում:

ՈՐՔԱՆ ՀԱՃԱԽ ԵՆՔ ՄԵՆՔ ՍՏՈՒՄ

Ամերիկյան գիտնականներն անցկացրել են հետազոտություններ, որոնց ընթացքում մարդկանց խնդրել են խոստովանել, թե որքան հաճախ են նրանք ստում, եւ մասնակիցների բացարձակ մեծամասնությունը խոստովանել է, թե ստում է օրը մեկ-երկու անգամ:

Հենց սկզբից մարդկությունը ստիպված է եղել անընդհատ պայքարել իր գոյի համար, մարդիկ ստիպված էին տարբեր միջոցների դիմել իրար միանալու եւ ցեղակիցների հետ մերվելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նման գործիքներից մեկը շատ հնարավոր է հենց սուտը դառնար: Տակտիկական սուտը կամ մոլորության մեջ գիտակցաբար գցելու հնարը խաբողին օգնում է հարաբերություններ հաստատել՝ մարդու մոտ ստեղծելով իր մասին այլ պատկերացումներ: Այնպես որ, շատ հնարավոր է, որ եթե մարդիկ իրար չխաբեին, երբեք չէին կարողանա պայմանավորվել ու նույնիսկ գոյատեւել:

ՄԱՆԿԱՆ ՍՈՒՏ

Եթե դուք մտածում եք, որ երեխաները բյուրեղյա մաքրություն ունեն իրենց մտադրությունների մեջ, եւ խաբում են, որովհետեւ չեն գիտակցում իրենց սուտը, ապա չարաչար սխալվում եք: Ուսումնասիրելով մանկան հոգեբանությունը՝ գիտնականները պարզել են, որ երեխան սովորում է գիտակցաբար խաբել, երբ դադարում է «չոչ» անել: Նույնիսկ երկու տարեկան երեխաները կարող են մատի վրա խաղացնել իրենց ծնողներին (եւ ոչ միայն):

«Ով այդքան էլ չի հենվում իր հիշողության վրա, նրան դժվար չէ դասավորված սուտ հրամցնել»,- Միշել դե Մոնտեն:

ԳԻՏԱԿՑՎԱԾ ՍՈՒՏ

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անընդհատ խաբող մարդկանց ուղեղը միջին հաշվով պարունակում է 22-26 տոկոս սպիտակ նյութ: Նրանց մոտ ավելի ուժեղ է զարգացած նախաֆրոնտալ շերտը՝ ուղեղի հատված, որը պատասխանատու է ընկալման ու ինտելեկտի համար: Տարօրինակ է, չէ՞: Բացարձակապես: Որպեսզի ասել ճիշտը, միայն ճիշտը եւ ոչինչ, ճշտից բացի, իրականում մեծ ուղեղ հարկավոր չէ: Այստեղ մտածելու ի՞նչ կա: Ասվում է այնպես, ինչպես կա: Իսկ ահա սուտը, շատ ավելի բարդ գործ է, այն ինչպես ուզում ես պտտի, ստեղծագործություն է...

Ահա թե ինչ է ասում այդ մասին պրոֆեսոր Յալին Յանգը (Հարավային Կալիֆոռնիայի համալսարան). «Հաճախ ու գիտակցաբար խաբող մարդկանց մոտ, ուղեղն ավելի լավ է իրար կապում տարբեր կերպարներ ու հասկացություններ, որոնք իրականում կարող են ոչ մի ընդհանուր բան չունենալ, մարդկային ուղեղի մեջ նման կապերի համար պատասխանատու է հենց այդ սպիտակ նյութը»: Ոմանց, օրինակ, դժվար է լինում աշխատանքից ուշանալու պատճառներ գտնել, իսկ արմատացած սուտասանները հեշտությամբ հորինում են մեկը մյուսից ճշտանման պատմություններ: «Նեյրոնական կապերը թույլ են տալիս մարդուն մի պատմությունից արագ անցում կատարել դեպի մյուսը եւ գեներացնել լիքը գաղափարներ, առաջին հայացքից համատեղելով լրիվ տարբեր բաներ», - պարզաբանում է Յանգը:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ

Մայիսի 10-11-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը երկօրյա պաշտոնական այցով գտնվում էր Նիդերլանդների Թագավորությունում: Սա Հայաստանի ղեկավարի առաջին պաշտոնական այցն է Նիդերլանդներ:

Խրոնինգենի միջազգային օդանավակայանում վարչապետին դիմավորեցին Դրենթե նահանգում թագավորի հանձնակատար Յետա Կլայնմսման, Ասենի քաղաքապետ Մարկո Աուտը, Թինարլոյի քաղաքապետ Մարսել Թայսենը, Նիդերլանդների Թագավորության ԱԳՆ արարողակարգի ղեկավար Դոմինիկ Քրուլինգը:

ՀՀ վարչապետի գլխավորած պատվիրակության կազմում էին ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, Աժ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ էդուարդ Աղաջանյանը:

Այցի շրջանակներում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպում ունեցավ Նիդերլանդների թագավորության վարչապետ Մարկ Ռութեի հետ, Դրենցի թանգարանում ներկա գտնվեց «Արարատի ստվերի ներքո. Հին Հայաստանի գանձերը» ցուցադրության պաշտոնական բացման արարողությանը: Պաշտոնական այցի շրջանակում, Նիկոլ Փաշինյանն այցելեց նաեւ Հաագայի Խաղաղության պալատ (Արդարադատության միջազգային դատարանի կենտրոնական եւ Մշտական միջնորդ դատարանի նստավայր): Նիդերլանդների խորհրդարանում վարչապետը հանդիպեց Բրաունի եւ Ներկայացուցիչների պալատի նախագահ Վերա Բերգկամպի հետ:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆ

ՀԱՐԳԱՆՔԻ ՈՒ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՕՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայաստանի բարձրագույն ղեկավարությունը ծաղիկներ դրեց Անհայտ զինվորի հուշարձանին ու հարգանքի տուրք մատուցեց Հայրենական մեծ պատերազմում եւ Շուշիի ազատագրման պայքարում զոհված հերոսների հիշատակին:

Այնուհետեւ անցկացվեց տոնական քայլերթ, որից հետո Նիկոլ Փաշինյանը մոտեցավ «Հաղթանակ» զբոսայգի ժամանած վետերաններին, շնորհավորեց նրանց տոնական օրվա առթիվ եւ մաղթեց առողջություն:

Նույն օրը Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանի, Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի եւ ՀՀ բարձրագույն ղեկավարության հետ այցելեց «Եռաբլուր» զինվորական պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցեց իրենց կյանքը Հայրենիքի անկախության համար զոհաբերած հայորդիների հիշատակին:

Նիկոլ Փաշինյանը ծաղիկներ դրեց Սպարապետ Վազգեն Սարգսյանի, Անդրանիկ Օզանյանի շիրիմներին եւ զոհված ազատամարտիկների հիշատակը հավերժացնող հուշահամալիրին:

Մայիսի 9-ին Երեւանի Հաղթանակի զբոսայգում անցկացվեց «Անմահ գունդ» լուռ ակցիան՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հերոսներին:

100 ՀԱԶԱՐ ԴՐԱՄԻ ՊԱՏՎՈՎՃԱՐ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՐՈՒՄ Է ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԿԱՆԻ 101 ՎԵՏԵՐԱՆ

Հայաստանում Հայրենական պատերազմի մասնակից 101 վետերան է ապրում: Նրանցից ամենաերիտասարդը 96 տարեկան է, ամենատարեցը՝ 101:

Հայաստանի Վետերանների միության նախագահ, գնդապետ Սիմոն Եսայանն ասաց, որ 101 վետերաններից 11-ը կանայք են:

Սիմոն Եսայանը նշեց, որ այս տարի Հայաստանում ապրող վեց վետերան է նշում 100-ամյակը:

Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկացրին, որ Հայրենական պատերազմին մասնակից վետերաններին պետության կողմից տրամադրվում են պատվովճարներ, պարգեւավճար եւ կենսաթոշակ:

- Պատվովճարը, որը տրամադրվում է հատուկ խումբ քաղաքացիներին, ամսական 100 հազար դրամ է կազմում: Հայաստանում պատվովճար է ստանում 132 վետերան: Պարգեւավճարի ու կենսաթոշակի չափը հստակ ֆիքսված չէ,-տեղեկացրին նախարարությունից:

Գերատեսչությունը տարվա կտրվածքով 18 միլիոն դրամ է տրամադրում «Հայաստանի Հանրապետության վետերանների միավորում» հասարակական կազմակերպությանը:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆ-ՀՈՒՆԱՍՏԱՆ-ԿԻՊՐՈՍ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

Մայիսի 10-ին Հայաստանի պաշտպանության նախարարության վարչական համալիրում անցկացվեցին պաշտպանության բնագավառում Հայաստան-Հունաստան-Կիպրոս եռակողմ համագործակցության պլանավորման խորհրդակցություններ:

«Հանդիպման ընթացքում ամփոփվել են Հայաստանի, Հունաստանի եւ Կիպրոսի միջեւ երկկողմ եւ եռակողմ ձեւաչափերով իրականացվող ռազմական համագործակցության շրջանակում նախորդ տարիներին կատարված աշխատանքները, քննարկվել համագործակցության զարգացման հեռանկարները:

Զրուցակիցները քննարկել են նաեւ տարածաշրջանային անվտանգությանն ու միջազգային զարգացումներին վերաբերող հարցեր:

Խորհրդակցությունների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների հիման վրա ստորագրվել են 2022թ. Հայաստանի եւ Հունաստանի միջեւ երկկողմ ռազմական համագործակցության ծրագիրը եւ Հայաստան-Հունաստան-Կիպրոս եռակողմ ռազմական համագործակցության գործողությունների պլանը (Հայաստանի եւ Կիպրոսի երկկողմ ռազմական համագործակցության 2022թ. ծրագիրը ստորագրվել է 2021թ. հոկտեմբեր ամսին):

ՀԱՅՏՆԻ Է ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԱՐՑԱՆ-ՀԱՄԱԼԻՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂԸ

Ամփոփվել է Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արյան-համալիրի նախաձեռնության մրցույթը:

Նշենք, որ ընթացիկ տարվա հունվարին Գագիկ Ծառուկյանն ու իր ընտանիքը հայտնել էին Հիսուս Քրիստոսի արյան կառուցելու նախաձեռնության մասին: Այն հանրային լայն քննարկման թեմա էր դարձել: Հայտարարվեց Հիսուս Քրիստոսի մոնումենտալ արյան-համալիրի ստեղծման մրցույթ: Քաղաքացիների քվեարկության ու հանձնախմբի որոշման արդյունքում, հաղթող է ճանաչվել քանդակագործ Արմեն Սամվելյանի նախագիծը:

ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴՈՒՇԱՄԲԵՈՒՄ

Մայիսի 12-13-ը Տաջիկիստանի մայրաքաղաք Դուշամբեում անցկացվեց ԱՊՀ արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստ, որի շրջանակներում, Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում ունեցավ Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ: Դրան հաջորդեց Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների եռակողմ հանդիպումը:

ՔԱՌՈՐԴ ՄԻԼԻՈՆ ԱՅՑԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ

Հայաստանի էկոնոմիկայի նախարար Քերոբյանը ներկայացրել է ներգնա տուրիզմի եռամսյակի յուցանիշները:

- 2022 թվականի առաջին եռամսյակում Հայաստան այցելած զբոսաշրջիկների թիվը 250,798 է, 2021-ի նույն ժամանակահատվածում՝ 87,131, 2019-ին՝ 333,150,- նշել է նախարարը: Վահան Քերոբյանը ներկայացրել է նաեւ ներգնա զբոսաշրջության 2016-2022 թվականների տվյալները՝ ըստ ամիսների:

ԿԱՅԾԱԿԻՑ ՁՈՒՇՎԵԼ Է ԳԱՎԱՌՑԻ ԱՆԱՍՆԱՊԱՀԸ

Մայիսի 12-ի ժամը 14:30-15.00-ի սահմաններում, Գավառ համայնքի «Մանուչարներ» կոչվող դաշտում, կայծակի հարվածից տեղում մահացել է Գավառ քաղաքի բնակիչ, 1949 թվականին ծնված Ռաֆիկ Կողպեյանը:

Նա զբաղվում էր անասնապահությամբ եւ կայծակի հարվածի պահին դաշտում արածացնում էր իր անասուններին:

- Ռաֆիկն այդ պահին նստած է եղել ֆիու վրա, եւ կայծակի հարվածը խլել է ե'ւ տիրոջ, ե'ւ ֆիու կյանքը: Նա ուներ հինգ երեխա, բոլորն էլ չափահաս: Շատ աշխատասեր ու պարկեշտ մարդ էր,- պատմեցին կայծակնահարվածի հարազատները:

Հիշեցնենք, որ վեց օր առաջ կայծակի հարվածից մահացել էր նաեւ Գեղարքունիքի մարզի Շատվան գյուղի բնակիչ, 38-ամյա Սուրեն Ջոհրաբյանը:

ՎՐԱՑԱԿԱՆ «ԹԵԳԵՏԱ ՄՈՏՈՐՍԸ» ԿՀԱՄԱԼՐԻ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՊԱՐԿԸ

Երեւանի համայնքային պարկը կհամալրվի 87 նոր ավտոբուսով: Հայտարարված միջազգային մրցույթում հաղթող է դարձել «Թեգետա Մոտորս» վրացական ընկերությունը: Երեւանի քաղաքապետարանում տեղի է ունեցել MAN մակնիշի նոր ավտոբուսների ձեռքբերման պայմանագրի ստորագրման պաշտոնական արարողությունը:

Փաստաթուղթը ստորագրել են Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանն ու Թեգետա Հոլդինգի ռազմավարական բիզնես ուղղությունների տնօրեն Իրակլի Պապիաշվիլին:

Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (EBRD) աջակցությամբ իրականացվող այս ծրագիրը եւս մեկ կարեւոր քայլ է՝ ուղղված Երեւանում տրանսպորտային բարեփոխումների իրականացմանը: Եվրո 6 բնապահպանական չափորոշիչներին համապատասխանող 12 մետրանոց ավտոբուսներն աշխատում են սեղմված բնական գազով, նախատեսված են 94 ուղեւորի համար, առանձնանում են ժամանակակից դիզայնով, անվտանգ են, լիարժեք հարմարեցված սահմանափակ հնարավորություններով մարդկանց համար, հագեցած նորագույն տեխնոլոգիաներով:

- Մենք շատ դրական ենք գնահատում համագործակցությունը Երեւանի քաղաքապետարանի հետ: Ես նախ շնորհավորում եմ Երեւանի քաղաքապետին, նաեւ երեւանցիներին, քանի որ առաջիկա ամիսներին դուք կունենաք ավտոբուսներ, որոնք տարածաշրջանում այս պահին գոնե համարժեքը չունեն: Մենք պատրաստ ենք այսուհետ նույնպես համագործակցել մի շարք ուղղություններով, այդ թվում՝ կազմակերպել տեղի անձնակազմի վերապատրաստում,- նշել է Իրակլի Պապիաշվիլին:

Ծրագիրը ֆինանսավորվում է Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից՝ 20 միլիոն եվրո սուվերեն վարկ եւ 5 մլն եվրո դրամաշնորհ՝ Արեւելյան Եվրոպայի էներգախնայողության եւ շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամից (E5P):

Ավտոբուսների փոխանցման առաջին փուլը կսկսվի 2022թ. վերջին եւ կիրականացվի մի քանի փուլերով 2022-2023 թթ. ընթացքում:

ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԽԱՉՔԱՐԻ ԲԱՑՈՒՄԸ՝ ՄԱՅԻՍԻ 15-ԻՆ

Հայ եւ վրաց ժողովուրդները դարերով ապրել են կողք-կողքի, բարեկամությունն ու համագործակցությունը հավատակից ազգերի միջեւ անշրջելի է եւ հաստատուն:

Որպես երկու հարեւան ժողովուրդների դարավոր բարեկամության հարատեւության վկայություն, որպես այդ բարեկամության զարգացման հսկայական ներուժի խորհրդանիշ՝ Թբիլիսիի Հավլաբար թաղամասում գտնվող Սուրբ Էջմիածին եկեղեցու բակում կանգնեցվեց գեղեցիկ խաչքար: Խաչքարը քրիստոնեության մասին լուռ վկայություն է, քրիստոնեության տարածման բավականին ազդեցիկ միջոց: Խաչքարը ներառում է նաեւ հնագույն քաղաքակրթությունների կրողներ Հայաստան ու Վրաստան երկրների, հայ-վրաց ժողովուրդների անխախտ բարեկամությունը մշտապես ամրապնդելու ցանկություն եւ հսկայական կարողունակություն: Խաչքարը կանգնեցվել է ծնունդով թբիլիսեցի Մխիթարյան ընտանիքի բարերարությամբ:

Ընթացիկ տարվա մայիսի 15-ին, հավարտ կիրակնօրյա Սուրբ պատարագի, ժամը 12.00-ին, Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ, Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի ձեռամբ եւ հոգեւորականաց դասի մասնակցությամբ, տեղի կունենա նորահիմն խաչքարի Սրբալույս մյուռոնով օծման արարողությունը:

«ԵՎՐԱՏԵՍԻԼ - 2022»

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՌՈԶԱ ԼԻՆԸ՝ ՓԱՌԱՏՈՆԻ ԵԶՐԱՓԱԿԻՉՈՒՄ

Իտալական Թուրին քաղաքում անցկացվեցին «Եվրատեսիլ-2022» երգի կիսաեզրափակիչ փուլերի ելույթները:

Հայաստանի ներկայացուցիչ Ռոզա Լինը, առաջին կիսաեզրափակչում, Snap» երգով նվաճեց եզրափակչի ուղեգիրը:

Ցավոք, վրացական Circus Mircus խումբը՝ Lock Me In երգով, որ հանդես եկավ երկրորդ կիսաեզրափակիչ փուլում, չկարողացավ նվաճել «Եվրատեսիլ 2022»-ի եզրափակչի ուղեգիրը: Եզրափակչի ուղեգիր նվաճեցին նաեւ Շվեյցարիան, Իսլանդիան, Լիտվան, Պորտուգալիան, Նորվեգիան, Հունաստանը, Ուկրաինան, Մոլդովան, Նիդերլանդները, Բելգիան, Չեխիան, Ադրբեջանը, Լեհաստանը, Ֆինլանդիան, Էստոնիան, Ավստրալիան, Շվեդիան, Ռումինիան, Սերբիան, Իտալիան, Ֆրանսիան, Գերմանիան, Իսպանիան, Միացյալ Թագավորությունը: Այն կկայանա այսօր՝ մայիսի 14-ին:

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐ

ՌՈՒԴԻԿ ՉՈԲԱՆՅԱՆ

Մե՛ր լավ դասընկեր, ինչո՞ւ կյանքն այդքան դաժան վարվեց քեզ հետ ... Երբեւէ կպատկերացնեինք, որ երեկ մեզ հետ խաղացող Ռուդիկին վերջին հրաժեշտն ենք տալու:

Մեր դասընկերը բարի էր, ազնիվ, համեստ, պարկեշտ ու ընկերասեր, ծիծաղկոտ ու ժպտերես, սիրված եւ հարգված ուսուցիչների, ընկերների եւ շրջապատի կողմից: Մեր սիրելի Ռուդիկ, որքա՜ն անկատար երազներ տարար քեզ հետ, որքա՜ն սպասելիքներ ունեիր դու կյանքից... Մեծ ափսոսանքով ենք խոսում անցյալով... իրոք անհավատալի է, բայց... բայց դու արդեն բացակայում ես մեր շարքերից... Անսփոփ է ծնողներիդ վիշտը, մեր սիրելի դասընկեր... Մենք կփորձենք սփոփել, բայց... բայց ոչ ոք եւ ոչինչ չի կարող լցնել այն դատարկությունը, որ թողեցիր քեզանից հետո: Քո քաղցր երգի ձայնը դեռ երկար կհնչի մեր ականջներում, իսկ քո գրած բանաստեղծությունները մենք միշտ կհիշենք ու կընթերցենք: Շատ դժվար կլինի առանց քեզ... մե՛ր սիրելի Ռուդիկ, դու մեր հուշերում կմնաս հավերժ, եւ համոզված ենք, որ քո ծիծաղկոտ աչքերով միշտ վերեւից կժպտաս մեզ բարի հրեշտակի նման: Հավերժ հիշատակ քեզ, մեր սիրելի դասընկեր: Թող հոգիդ լուսավորվի Աստծո օրհնանքով եւ հավիտենությամբ:

XI դասարանի աշակերտներ
Շահումյանի թիվ 1 հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը Ռուդիկ Չոբանյանի ողբերգական մահվան կապակցությամբ ցավակցում է նրա ծնողներին ու հարազատներին:

ԾԱՆՐԱՄԱՐՏ

ՎՐԱՍՏԱՆԸ՝ 1, ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ 5 ՄԵԴԱԼ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Սաբա Ասանիձե

Հունաստանի Հերեկլիոն քաղաքում եզրագիծը հատեց ծանրամարտի մարզաձեւում աշխարհի երիտասարդական առաջնությունը:

Մրցաշարում Վրաստանի հավաքականի մարզիկներից աչքի ընկավ վրաց հայտնի ծանրորդ, աշխարհի, Եվրոպայի եւ Օլիմպիական խաղերի չեմպիոն Գիորգի Ասանիձեի որդին՝ Սաբա Ասանիձեն: Նա 81 կգ քաշային կարգի հրում վարժությունում արժանացավ փոքր ոսկե մեդալի, իսկ երկամարտում նվաճեց մեծ բրոնզե մեդալ:

Մրցաշարին մասնակից Հայաստանի մարզիկներն իրենց ակտիվում գրանցեցին 2 ոսկե, 2 արծաթե եւ մեկ բրոնզե մեդալներ:

Աշխարհի չեմպիոնի կոչումը նվաճեցին Գառնիկ Չոլակյանը (55 կգ) եւ Գարիկ Կարապետյանը (96 կգ), արծաթե մեդալներ են նվաճել Սուրեն Գրիգորյանը (89 կգ) եւ Պետրոս Պետրոսյանը (102 կգ), իսկ բրոնզե մեդալակիր է դարձել Գոռ Սահակյանը (67 կգ):



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Միջնակարգ մասնագիտական կրթական օջախ: 4.Չորրորդ դարի Հայոց կաթողիկոս ... Պարթեւ: 8.Իմաստ արտահայտող տառերի խումբը: 10.Մետրոյի կայարան Թբիլիսիում: 12.Ժխտական նախածանց: 13.Հերիք, բավական: 14.Թխվածքի համային բաղադրիչ: 15.Չծերացած, թարմ, երիտասարդ: 17.Մաքուր, անաղարտ, տնական: 18.Հարմար, ճիշտ ժամանակին: 19.Սատկած կենդանու դի: 20.Բոյը, նաեւ տարիքը: 22.Թիվ, նշան, բալ: 24.Զատկական ալկոհոլային ըմպելիք: 26.Հնդկական ֆիլմ՝ «...ն եւ Գիտան»: 27.Սխալ, ոչ ճիշտ: 29.Անաղարտ, մաքուր: 32.Վրաց երգչուհի ... Բրեգվաձե: 34.Անմարդաբնակ, ամայի: 35.Քաղաք ՌԴ-ում: 35.Երիտասարդ երգիչ, դերասան ... Ծառուկյան: 38.Ետադաս կապ: 39.Ցուցական դերանուն: 40....լացի, ...լիկ, ...լիա: 41.Հայոց աստվածուհի: 43.Կամ, կաս, ...: 44.Գետ Վրաստանում: 45.Օրգանական նորագոյացություն: 47.Ավետա..., քավա..., տաղա...: 50.Հայտնի լուսանկարիչ Հովսեփ ...: 52.Բաղնիքի տեսակ: 54.Պ.Պռոշյանի ծննդավայրը: 55.Մեղուների խումբը: 57.Երեւանյան լիճ: 58.Ավ.Իսահակյանին տրված պատվանունը: 59.Հացահատիկի խուրձ: 60.Փոքրացուցիչ մասնիկ: 61.Արմեն Տիգրանյանի օպերաներից: 62.Նահանգ Արեւմտյան Հայաստանում:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ծովափնյա քաղաք Վրաստանի Աջարիայի Ինքնավար Հանրապետությունում: 2.Հայկական հաց: 3.Կարծախում ծնված հայ աշուղ: 4.Վանական համալիր Հայաստանի Լոռու մարզում: 5.Հայտնի ռեստորան Երեւանի Նարեկացի թաղամասում: 6.Համեմունքի տեսակ: 7.Լուսանկարչական ապարատ: 8.Հայկական ֆիլմ: 9.Փարիզում 1898-1949 թթ. լույս ընծայված հայկական պարբերական (հիմն.՝ Արշակ Չոպանյան): 11.Բարձունք, լեռ: 16...., ոտ, կոտ: 18....միր, ...նիր: 21.Սուր մտքեր ունեցող: 23.Ս.Եսենինի հայուհի գրական հերոսը: 24.Հովհ.Թումանյանի պատմվածքներից: 25.Ելցինի կինը: 26.«... կրել, սարեր շարժել, փոշի մաքրել» (Պ.Սեւակ): 28.Կարող, խելացի: 30.Բանջարանոցային բույս: 31.Գետի մեջ ցցված քարեր: 33.Ատամի պարսկական մածուկ: 35.Քաղաք Արեւմտյան Հայաստանում: 37.Կղզիական պետություն: 42.Սերգեյ Փարաջանովի ֆիլմերից «... գույնը»: 43.Բոց, ալավ, ատր: 46.Ռեստորան Թբիլիսիում: 48.Երիտասարդ երգիչ ... Բավեյան: 49.Ռաֆֆու պատմավեպերից: 50.Քարագործ վարպետ: 51.Դիմափոշի, գրիմ: 52...., դրա, նրա: 53.Հերոսուհի Մուրացանի «Գեւորգ Մարզպետունի» վեպում: 56.Ողջ, ամբողջ (բանաստեղծորեն): 57.Վրաց սպորտային մեկնաբան, թատրոնի ու կինոյի դերասան ... Մախարաձե: 60.Համադասական շաղկապ:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Խելառ: 8.Տայգա: 10.Լուվր: 11.Վույ: 13.Դավիթ: 14.Ուկրաինա: 16.Ակահ: 17.Դեր: 18.Դոշաբ: 20.Լորդ: 21.Սան: 22.Վհատ: 26.Երեց: 28.Բեկոր: 31.Նեղ: 32.Սակ: 34.Վինի: 35.Իսկրա: 36.Ցլիկ: 38.Կոկ: 41.Տհալ: 43.Ֆիդայի: 45.Ծունկ: 48.Կոր: 49.Ֆարս: 52.Զգոն: 53.Դուռ: 54.Մուր: 55.Թիակ: 56.Խոյ: 57.Բիձա: 58.Ռամ: 59.Շրի: 60.Սին:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Հեռախոս: 2.Մռուք: 3.Ստրուկ: 4.Ժյուրի: 5.Կավիդոր: 7.Ալիշան: 9.Լյարդ: 12.Ուներ: 15.Կաբարե: 19.Շաշկի: 23.Հենակ: 24.Տեղին: 25.Գրիլ: 27.Լար: 29.Եվրո: 30.Ոնց: 32.Սկիհ: 33.Կառլ: 37.Իլիկ: 39.Կանգառ: 40.Պարույր: 41.Տիֆ: 42.Այրուձի: 44.Դոդոշ: 46.Ուզի: 47.Կոկա: 50.Ամիս: 51.Սրան:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅԵՑՈ ՄՈՆԱՑԱՐՈՒՄ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱԹՈՆԵԼԻՆ ՓՈՂՈ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ԹԲԻԼԻՍԻ, ՍԱՀԱՐՈՎՅԼՈՎ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445